

Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/23 »* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/23-1

ք. Երևան ____/_____/2021թ.

« ՀՀ ֆինանսների նախարարություն »-ը ի դեմս Վազգեն Հարությունյան ի, որը գործում է « ՀՀ ֆինանսների նախարարություն »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « ԼՍՈՖՏ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Լարիսա Լալայան ի, որը գործում է « ԼՍՈՖՏ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT-TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախառնախաճի և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն Էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն Էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում

նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային

գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 19700000.00 AMD(տասնինը միլիոն յոթ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: 7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ յուրաքանչյուր ամսվա համար պայմանագրի գնի 1/12-րդի չափով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով: 921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [\[5\]](#):

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման

նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11^[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի

օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

13^[8]

-

-

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՍՈՖՏ ՍՊԸ

Մ.Ադամյան-1

**ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փ. 1/3 շենք,
7-րդ հարկ**

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

900011022887

24100023278500

02629081

01202055

/ստորագրություն/

/ստորագրություն/

Կ.Տ

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը

չհակասող դրույթներ:

[17](#)⁶Կիրառվում է, եթե կնքվում

էնախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության
ծառայությունների մատուցման պայմանագիր

¹⁷Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա
պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

⁸Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից:
Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և
Կատարողի միջև համաձայնեցված

չափով: Եթե պայմանագրով չհնախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն
կետը հանվում է նախագծից:

⁹Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի
հիման

վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնին կատմամբ, որի
շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների
չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը
հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի
նկատմամբ:

¹⁰Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող
գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

¹¹Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում
գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

¹²Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում
համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

[13](#) Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ
մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային
միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ
նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով
ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում
նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է
պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ
հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ծառայության			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	72261160/504	Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT-TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	1. Գնումների պլանի փոփոխությունների համադրման սպասարկման ծառայություն Գնումների պլանի (այսուհետ՝ ԳՊ) փոփոխված տվյալները էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության (այսուհետ՝ PPCM) և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով PPCM համակարգից կուղարկվեն LSFinance (ԳԳՕ) համակարգ, որտեղ այդ տվյալները ավտոմատ կերպով կստուգվեն և սխալների բացակայության դեպքում կընդունվեն LSFinance (ԳԳՕ) համակարգի կողմից: Սխալների դեպքում՝ PPCM համակարգին կուղարկվի անհամապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն, իսկ անհայտ սխալների դեպքում՝ պատվիրատուի համապատասխան աշխատակցի կողմից

Էլեկտրոնային փոստի միջոցով դիմելու դեպքում սխալի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Օրինակ՝ եթե PPCM համակարգում կատարվել է հոդվածային վերաբաշխում, սակայն LSFinance (ԳԳՕ) համակարգում առկա չեն համապատասխան ֆինանսական միջոցները, ապա հաղորդագրության միջոցով հստակ կտեղեկացվի այդ մասին: Գնումների պլանի փոփոխությունների համադրում: Գնումների պլանի (այսուհետ՝ ԳՊ) փոփոխված տվյալները Էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության (այսուհետ՝ PPCM) և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով PPCM համակարգից ուղարկվում են LSFinance (ԳԳՕ) համակարգ, որտեղ այդ տվյալները ավտոմատ կերպով ստուգվում են և սխալների բացակայության դեպքում ընդունվում LSFinance (ԳԳՕ) համակարգի կողմից: Տվյալների ընդունումից հետո երկու համակարգերում միաժամանակ կատարվում են գնումների պլանում կատարվող անհրաժեշտ բոլոր փոփոխությունները: Ստորև ներկայացվում է համակարգերում համադրման գործընթացի ընդհանուր նկարագրությունը. 1. Պատվիրատուի ադմինիստրատորը PPCM համակարգում բացում է ԳՊ փոփոխման հայտը և հաստատում կամ մերժում է այն: Հաստատման դեպքում՝ PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է հաստատված տվյալները և ուղարկում է LSFinance (ԳԳՕ) համակարգ՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական հոդվածների: Իսկ մերժման դեպքում՝ PPCM համակարգը ԳՊ վարողի համար ստեղծում է առաջադրանք՝ փոփոխման հայտի մերժման վերաբերյալ: 2. Հաստատման դեպքում LSFinance (ԳԳՕ) համակարգը ստանում է տվյալները,

մշակում է ըստ հողվածների և յուրաքանչյուր հողվածի համար տալիս է առանձին պատասխան: Եթե տվյալ հայտում առնվազն 1 հողված մերժվում է, ապա և LSFinance (ԳԳՕ) և PPCM համակարգերում ամբողջ հայտը մերժվում է: 3. LSFinance (ԳԳՕ) համակարգը ընդունում է տվյալները: Ընդունման և մերժման դեպքերում PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է տվյալները և ուղարկում է PPCM համակարգ: Ընդունված տվյալների դեպքում PPCM համակարգը ԳՊ-ում կատարում է համապատասխան փոփոխություններ: Տվյալները ընդունված չլինելու դեպքում՝ մերժվում է ԳՊ փոփոխման հայտը, որից հետո ԳՊ վարողի համար ստեղծում է առաջադրանք՝ փոփոխման հայտի մերժման վերաբերյալ: 2. PPCM համակարգից LSFinance (ԳԳՕ) համակարգ պայմանագրի համադրման սպասարկման ծառայություն Կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով PPCM համակարգից կուղարկվեն LSFinance (ԳԳՕ) համակարգ, որտեղ այդ տվյալներն ավտոմատ կերպով կստուգվեն և սխալների բացակայության դեպքում կընդունվեն LSFinance (ԳԳՕ) համակարգի կողմից: Սխալների դեպքում՝ PPCM համակարգին կուղարկվի անհամապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն, իսկ անհայտ սխալների դեպքում՝ պատվիրատուի համապատասխան աշխատակցի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով դիմելու դեպքում սխալի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Անհրաժեշտ է արդեն իսկ համակարգում մուտքագրված պայմանագրերի գումարի նվազեցման դեպքում ապահովել PPCM համակարգից ուղարկված 0-ացված պայմանագրերի հաստատումը LU համակարգում: PPCM

համակարգից LSFinance (ԳԳՕ) համակարգ պայմանագրի ներմուծում: ARMEPS համակարգում մրցույթի շնորհումից հետո PPCM համակարգում գեներացվում է պայմանագրի սևագիր տարբերակը: Գնումների համակարգողը (այսուհետ՝ ԳՀ) լրացնում է պայմանագրի անհրաժեշտ դաշտերը և պահպանում կատարված փոփոխությունները: Որից հետո ուղարկում է պայմանագիրը հաստատման: PPCM համակարգում հաստատման բոլոր փուլերն անցնելուց հետո համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է պայմանագրի տվյալները և այն ուղարկում LSFinance (ԳԳՕ) համակարգ: Ստորև ներկայացվում է համակարգերում համադրման գործընթացի ընդհանուր նկարագրությունը. 1. ԳՀ-ը PPCM համակարգում լրացնում է պայմանագրի դաշտերը, պահպանում է փոփոխությունները և ուղարկում հաստատման: 2. ԳՀ ղեկավարը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ: ԳՀ ղեկավարը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման դեպքում Պատվիրատուի ադմինը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ, իսկ մերժման դեպքում՝ ԳՀ-ը ստանում է ծանուցում մերժման վերաբերյալ: 3. Հաստատման դեպքում՝ Պատվիրատուի ադմինը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ: Պատվիրատուի ադմինը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման դեպքում PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է տվյալները և ուղարկում LSFinance (ԳԳՕ) համակարգ, ինչպես նաև տրամադրվում է պայմանագրի բովանդակության էլեկտրոնային հասցեն, իսկ մերժման դեպքում՝ ԳՀ-ը ստանում է ծանուցում մերժման վերաբերյալ: 4. LSFinance (ԳԳՕ) համակարգը ընդունում կամ մերժում է պայմանագրի տվյալները:

Ընդունման դեպքում LSFinance (ԳԳՕ) համակարգը գեներացնում է տվյալ պայմանագրի համար ունիկալ կոդ, որը տրամադրում է PPCM համակարգին տվյալ պայմանագրի հետագա փոփոխությունների համար: Պայմանագրի փոփոխության դեպքում PPCM համակարգից բացի պայմանագրի փոփոխված տվյալներից LSFinance (ԳԳՕ) համակարգ տրամադրվում է նաև նախկինում LSFinance (ԳԳՕ) համակարգում գեներացված տվյալ պայմանագրի ունիկալ կոդը: 5. Տվյալների հաստատման դեպքում ԳՊ-ում պայմանագրի գումարի չափով հաշվարկվում է ծախս, իսկ սխալների առկայության դեպքում՝ PPCM և LSFinance(ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է չընդունված տվյալները, ուղարկում PPCM համակարգ և ԳՀ-ն ստանում է ծանուցում մերժման վերաբերյալ: 3. LSFinance (ԳԳՕ) համակարգում գնումների պլանի ներմուծում: Գնումների պլանը LSBudget համակարգում հաստատվելուց հետո եռօրյա ժամկետում ներմուծել LSFinance (ԳԳՕ) համակարգ: 4. ԳՄԱ կոդերի հերթական համարների անսահմանափակություն: LSFinance (ԳԳՕ) համակարգի գնումների պլանի և պայմանագրերի բազաներում ապահովել ԳՄԱ կոդերի հերթական համարների քառանիշի սահմանափակություն: 5. Հեռախոսային խորհրդատվության տրամադրում LSFinance (ԳԳՕ) համակարգի շահագործման գծով հեռախոսային խորհրդատվության տրամադրում ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցներին, իսկ CLIENT - TREASURY համակարգի գծով՝ պետական կառավարման մարմինների աշխատակիցներին: 6. Համակարգի բնականոն աշխատանքի ապահովում LSFinance (ԳԳՕ) համակարգի շահագործման ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված խնդիրների վերհանում և համակարգի բնականոն աշխատանքի ապահովում: 7. Մեկ անձ

		գնման ձևով հաշվետվությունների արտահանում և տրամադրում Յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ LSFinance (ԳԳՕ) համակարգում առկա մեկ անձ գնման ձևով հաշվետվությունների արտահանում և դրա՝ մինչև տվյալ շաբաթվան հաջորդող շաբաթվա 1-ին աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարության xmltreasury և LSsoft կատալոգերում տեղադրում: Յուրաքանչյուր ամիս հանձնման-ընդունման արձանագրությանը կից ներկայացնել կատարված գործողությունների մասին հաշվետվություն: Պայմանագրի պատշաճ իրականացման համար Պատվիրատուն պետք է Ծառայություններ մատուցողին տրամադրի հետևյալը. 1. Համակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը, 2. Եթե պատվիրատուի պահանջով PPCM համակարգում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ, որն առնչվում է LSFinance (ԳԳՕ) համակարգի գործունեությանը, ապա անհրաժեշտ է տվյալ փոփոխությունները համատեղ ստուգել 2 համակարգերի թեստային միջավայրում: 3. Անհրաժեշտ հարմարությունները և տեխնիկական միջոցներին հասանելիությունը: Կցված է 27a217bd.docx
--	--	--

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հասցե՝ Մ.Ադամյան-1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011022887

02629081

Վազգեն Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԼՍՈՖՏ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փ. 1/3 շենք, 7-րդ հարկ

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

24100023278500

01202055

Լարիսա Լալայան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
 ____/_____/2021թ. կնքված
 ՀՀ ՖՆ-ԷԱՃԾԶԲ-21/23 ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
Հափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
				հասցեն	Ժամկետը**
դրամ	19700000.00	19700000.00	1	ՀՀ	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվանից հետո կողմերի իրավունքների և պա րտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից

					հաշված 20-րդ օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:
--	--	--	--	--	---

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հասցե՝ Մ.Ադամյան-1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011022887

02629081

Վազգեն Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԼՍՈՖՏ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փ. 1/3 շենք, 7-րդ հարկ

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

24100023278500

01202055

Լարիսա Լալայան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3

____/____/2021թ. կնքված

ՀՀ ՖԼ-ԷԱՃԾՁԲ-21/23 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

[illegible]

		NT-TREASURY համակարգի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ													
--	--	---	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հասցե՝ Մ.Ադամյան-1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011022887

02629081

Վազգեն Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԼՍՈՖՏ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փ. 1/3 շենք, 7-րդ հարկ

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

24100023278500

01202055

Լարիսա Լալայան

/ստորագրություն/

Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը

հհ

հվհհ

գտնվելու վայրը

հհ

հվհհ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «__» 20__ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____» 20__թ.

Պայմանագրի համարը՝ ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/23-1

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «__» «_____» 20__թ. դուրս գրված N __ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ)							

համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT-TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունն եր							
--	--	--	--	--	--	--	--

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

**ազգանուն, անուն
Կ.Տ.**

**ազգանուն, անուն
Կ.Տ.**

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ
Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ֆինանսների նախարարություն -ի (այսուհետ՝
Պատվիրատու) և ԼՍՈՖՏ ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող)
միջև 20__թ. _____ -ին կնքված N ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/23-1 գնման
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____ -ին
հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Armeps/ppcm և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծրագրի, LSFinance (ԳԳՕ) և CLIENT-TREASURY համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	դրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն